ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 3 *Общественные науки*

Ի. ԲԱՇՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1948 թվականի փետրվարի 27-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի բնդհանուր ժողովը։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը բաց անելով ժողովն ասաց.

— Ընկերներ, շնորհիվ բոլշևիկների պարտիայի և Սովետական կառավարության հատուկ հոգատարության, գիտական աշխատանքը Հայաստանում տարեց տարի ավելի մեծ ծավալ է ընդունում։

Մենք կարող ենք պարծենալ, որ Հայաստանի գիտնականների կատարած աշխատանքների կշիռը սովետական գիտության մեջ քանի գնում ավելի մեծանում է։ Մեզ մոտ այժմ ուսումնասիրվում և լուծվում են գիտական այնպիսի մեծ խնդիրներ, որոնք ակտուալ նշանակություն ունեն ժամանակակից գիտության մեջ։ Մենք ունենք խոշոր նվաճումներ կոսմիկական ճառագայթների ուսումնասիրության, մաթեմատիկական մի շարք խնդիրների և աստղագիտության բնագավառում։

Հաջողություններ ունենք նաև այնպիսի գիտությունների բնագավառում, ինչպիսիք են բուսաբանությունը, գենետիկան, երկրագործությունը, միկրոբիոլոգիան։

Մենք նվաճումներ ենք ձեռք բերել շինարարական տեխնիկայի և երկրաբանության ասպարեզում։

Լուրջ աշխատանքներ են սկսված հասարակական գիտությունների բնագավառում։

Այս բոլորը պահանջում են, որ մենք 1948 թվականի ընթացքում աշխատենք ավելի ինտենսիվ, նպատակասլաց, որպեսզի կարողանանք կատարել պարտիայի և կառավարության առաջադրանքները։ Մենք պետք է գործադրենք մեր բոլոր ուժերը բոլոր բնագավառներում օտարերկրյա գիտնականների նվաճումները գերազանցելու համար։ Պետք է ավելի մոտեցնել մեր գիտությունը սովետական կյանքի պահանջներին, մշտական և ուժեղ կապ ստեղծել գիտության և ժողովրդական տնտեսության միջև։ Ամեն ինչ պետք է անել մեր ռեսպուբլիկայի արտադրողական ուժերը հզորացնելու համար։

Սովետական Հայաստանում ստեղծված են գիտության զարգացման համար բոլոր անհրաժեշտ պայմանները։ Տասնապատկենք մեր ուժերը սովետական գիտությունն է լ ավելի առաջ մղելու համար։

Ընկ. Վ. Համբարձումյանի բացման խոսքից հետո Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Գուլքանյանը զեկուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի 1947 թվականի գիտա-հետազոտական աշխատանքների արդյունքների և 1948 թվականի հիմնական պրոբլեմների մասին.

Զեկուցողը բաց բաժանմունքների հանգամանորեն կանգ առավ այն պրոբլեմների վրա որոնց ուսումնասիրությամբ զբաղվել են Ակադեմիայի գիտաշխատակիցները 1947 թվականի ընթացքում և թվարկեց այն հաջողությունները, որ ձեռք են բերել տարբեր ինստիտուտներ իրենց հետազոտությունների ընթացքում։

Զեկուցողը կանգ առավ նաև մի շարք ինստիտուտների աշխատանքում նկատվող թերությունների վրա (Քիմիական ինստիտուտ, Բուսաբանական այգի և այլն)։

Գաղափարական, մեթոդոլոգիական լուրջ թերություններ են եղել Հասարակական բաժանմունքի մի շարք ինստիտուտների գիտական հետազոտությունների մեջ (նացիոնալիզմի առանձին ռեցիդիվների երևան գալը, պատմական անցյալի գերագնահատում, դասակարգային պայքարի անտեսում, արևմուտքի առաջ ստորաքարշության երևույթներ և այլն)։

Այնուհետև ընկ. Գուլքանյանը ծանոթացրեց 1948 թվի գիտա-հետազոտական աշխատանքների պլանը, մանրամասնորեն թվարկելով այն պրոբլեմները, որոնցով զբաղվելու են Ակադեմիայի գիտաշխատակիցները։

Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ ընկ. Վ. Հ. Գուլքանյանի զեկուցման շուրջը բացված մարերի փոխանակությանը մասնակցեցին Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Ա. Ղափանցյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Հ. Ե. Բունիաթյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Ա. Հակոբյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Լ. Շահինյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ իսկական անդամ Ա. Զ. Թամամշևը, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ս. Ղարիբյանը, Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից-անդամ Գ. Ս. Դավթյանը, տեխնիկական գիտությունների թեկնածու Կ. Գ. Ստասը։

Վերջում նյութ ունեցավ Հայկական ՍՍՌ ԳԱ պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Համբարձումյանը։

Ընկ. Համբարձումյանը նշեց, որ Ակադեմիայի առանձին ինստիտուտներում գիտատեսական աշխատանքի ընդհանուր մակարդակը ցածր է։ Այդ ինստիտուտները չեն կարողացել տալ ժամանակակից սովետական գիտության բարձր մակարդակի վրա կանգնած այնպիսի աշխատանքներ, ինչպիսին մեզնից պահանջում է մեր պարտիան և կառավարությունը։ Մենք պետք է մեր բարձրորակ աշխատանքներով ետ չմնանք Սովետական Միության խոշոր կենտրոնների գիտնականներից, պետք է մրցենք նրանց հետ։

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ասպիրանտուրայի վրա։ Պետք է ասպիրանտ ընդունել ամենից ավելի խոստումնալից երիտասարդներից, որոնք ունեն գիտական աշխատողներ դառնալու որոշակի հեռանկար։

Հարկավոր է ստեղծել նաև տեխնիկական անհրաժեշտ բազա, մասնավորապես լաբորատորիաներ։

Մեծ կարևորություն պետք է տալ նաև էրուդիցիաների լավ ու մտածված կազմակերպմանը։

Ընդհանուր ժողովը լսելով Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, Ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Դուլքանրանի զեկուցումը Ակադեմիայի 1947 թվականի գիտա-հետազոտական աշխատանքների արդյունքների և 1948 թվականի հիմնական պրոբլեմների մասին, որոշեց՝ հավանություն տալ 1947 թվականի ընթացքում կատարված աշխատանքների արդյունքներին և հաստատել 1948 թվականի համար նշված հիմնական պրոբլեմները։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ

1948 թ. հունվարի 28-ից մինչև փետրվարի 1-ը Լենինգրադում տեղի ունեցավ Անդրկովկասի հնագիտությանը նվիրված գիտական սեսիա, որը հրավիրված էր ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի Նյութական Կուլտուրայի Պատմության Ինստիտուտի և Պետական Էրմիտաժի կողմից։ Սեսիային մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի գիտնականները, ինչպես և Լենինգրադի ու Մոսկվայի՝ Կովկասի հնագիտության հարցերն ուսումնասիրող գիտնականները։

Գլխավոր և սեկցիոն նիստերում կարդացվեց 37 գիտական զեկուցում, որից 11 զեկուցում նվիրված Հայաստանի հնագիտական հարցերին։ Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին հանդես եկավ բրոնզի ճաղով և տեղամարի ռելիեֆներն ու հայկական պալատական շենքերի հարտարապետական հարդարումը» զեկուցումով։ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի թղթակից անդամ Բ. Պիոտրովսկին զեկուցումներ կարդաց Վանդրկովկասի հնագիտական ուսումնասիրության արդյունքների ու պրոբլեմների մասին և կարդաց Կարմիր Բլուրի պեղումների մասին։ Կարմիր Բլուրի հարտարապետական հիշատակարանների գիտարիրյալ հարակից զեկուցումով հանդես եկավ հարտարապետական գիտությունների թեկնածու Կ. Հովհաննիսյանը, ՍՍՌ Միության ԳԱ թղթակից-անդամ Կ. Տրեվերը զեկուցում կարդաց Դաանի ամրոցի մասին։ Պատմական գիտությունների թեկնածու Կ. Ղաֆադարյանը հաղորդեց Դվինի պեղումների արդյունքների մասին։ Պատմական գիտությունների թեկնածու Մ. Պանիկիանը զեկուցեց Հայաստանի ստորին պալեոլիթի մասին։ Հարտարապետական գիտությունների թեկնածու Վ. Հարությունյանը՝ Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության աշխատանքների մասին, պատմական գիտությունների թեկնածու Բ. Առաքելյանը՝ Հայաստանի բանդակագործության հուշարձանները 4—7-րդ դարերում թեմայով։

ՍՍՌ Միության Գիտությունների Ակադեմիայի թղթակից-անդամ Հ. Ամիրանաշվիլին զեկուցում կարդաց վրացական միջնադարյան որմնանկարչության մի քանի հուշարձանների մասին։ Վրաստանի հնագույն մայրաքաղաք Մցխեթի պեղումների մասին զեկուցումներով հանդես եկան հնագետ Ա. Կալանտարովն (Սամտավրոյի նեկրոպոլի պեղումների մասին), հարտարապետ, Սովետական Միության հերոս, Ի. Ցիցիշվիլին (հին Վրաստանի հարտարապետությունն ըստ Բագինեթայի պեղումների) և Ա. Քավախաշվիլին, որը խոսեց Մցխեթում հայտաբերված ոսկի իրերի պատրաստման տեխնիկայի մասին։ Հնագետ Ն. Խոշտարիան զեկուցեց Խորի գետի (Գոլիդա) ավազանի հնագույն բնակավայրերի ուսումնասիրության արդյունքների մասին, դրամագետ Դ. Կապանաձեն Ակիի սատաներների (դրամ) լեգիզացիայի մասին և այն կարծիքը հայտնեց, թե նրանք պետք է կոլխիդական ծագում ունենան։ Լ. Սորոկվովը զեկուցեց Անաքվայի մաս (Աբխազիա) հայտաբերված քարե գործիքների մասին։